



### ՀԱՐԻՐԻ ԱՅՍՕՐ ՊՔԵՐՔԷ Կ'ԱՅՅԵԼԷ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի այսօր պիտի այցելի Պքերքե, Չատկուան տօնին առիթով մարտնչիներու Նաարալլա Պուրոնու Սֆէյր պատրիարքը շնորհաւորելու:

Միւս կողմէ, երէկ Սֆէյր պատրիարք Չատկուան առիթով արտասանեց իր պատգամը, որուն մէջ կոչ ուղղեց լիբանանցիներուն՝ միասնական ըլլալու եւ ներլիբանանեան շարքերը ամրապնդելու:

«Բոլորս կը գտնուինք մէկ նաւու մէջ. եթէ այդ նաւը ընկնայ, բոլորս միասին պիտի ընկնուինք, իսկ եթէ ապահով ելեքք մը հասնին, բոլորս միասին կը փրկուինք», ըսաւ Սֆէյր պատրիարքը:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՇԻՒՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Էմիր Քապալան կոչ ուղղեց նոր կառավարութեան՝ ինքզինք ապատարձակելու անհատական նեղ շահերէ, կեդրոնանալով միայն երկրին սահմանադրութեան գործադրութեան վրայ:

Քապալան երէկ հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մետուս Իտրիսիի հետ: Հանդիպումին շեշտուեցաւ իրացքի ժողովուրդին իրաւունքները յարգելու անհրաժեշտութիւնը, որ միակ իրաւասուն է որոշելու Իրաքի ապագան եւ պահանջելու օտար դաշնակից ուժերու հեռացումը Իրաքէն:

●ՀԸԶՊԱԼԼԱՅԻ հոգեւոր պետ շէյխ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երէկ նկատել տուաւ, որ երկիրը տակաւին ենթակալ է անձնական նեղ հաշիւներու մրցումին ու բախումներուն:

Ան հարց տուաւ, որ արդե՞ք հիմնական հարցը անուանացանկերու փոփոխութիւններուն մէջ կը կայանար, թէ մտածողութեանց, կոչ ուղղելով թափ տալ մտայնութեանց անհրաժեշտ փոփոխութեան, մէկզի ձգելով անձնական բոլոր տեսակի հաշիւներն ու շահերը:

●ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ նախագահ Նեպիի Պըրրի երէկ շնորհաւորեց խմբագիրներու սենտիքայի նախագահ Մըլիքէ Քարամը, որ ընտրուեցաւ «արաբական աշխարհի ապատուութիւններու յանձնախումբի» նախագահ:

Պըրրի դրուատեց Քարամի ջանքերը՝ պաշտպանելու երկրին ժողովրդավարութիւնն ու ապատ խօսքի սկզբունքն ու գործադրութիւնը:

Քարամը շնորհաւորեցին նաեւ տեղեկատուութեան նախարար Միշէլ Սամահա, վարչական բարեկարգումներու նախարար Քարիմ Բագրատունի, ինչպէս նաեւ քաղաքական անձնաւորութիւններ եւ լրագրողներ:

### ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՄԻՔԱԹԻ, ԺԱՐԵՐ ԵՒ ՕՊԷՅՏ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ԿԸ ՆԿԱՏԵՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեմիյ Միքաթի, կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժաւր եւ արտաքին գործոց ու արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ կատարեցին յայտարարութիւններ, խօսելով նորակազմ կառավարութեան առաքելութիւններուն մասին:

Միքաթի կոչ ուղղեց բազմապատկելի գործ դրուած բոլոր ճիգերը, երկրին գերագոյն շահերուն համար եւ վերջ տալ քաղաքական նեղ հաշիւներուն եւ առիթ տալ կառավարութեան՝ աշխատելու, ամրապնդելու եւ կայունացնելու ներքին կեանքը, իր բոլոր մակարդակներով՝

ապահովական, քաղաքական, տնտեսական եւ ընկերային:

Միքաթի նկատել տուաւ, որ ինք նոր կառավարութեան կազմը նոյնը չի տեսներ ինչպէս նախկինը, աւելցնելով, որ ներկայիս քաղաքական այլ հոսանքներ նաեւ մասնակից են կառավարութեան, մաղթելով, որ կառավարութիւնը իրականացնէ բոլոր լիբանանցիներուն փափաքները:

Իր կարգին, Ժաւր յոյս յայտնեց, որ կառավարութիւնը կրնայ բարգաւաճեցնել երկիրը, նկատել տալով, որ պահանջուած հաւասարակշռութիւնը պահուած է կառավարութեան մէջ ընդարձակ ներկայացուցչութեամբ եւ ընդգրկելով Լիբանանի քաղաքական գրեթէ բոլոր հոսանքները:

Օպէյտ իր կարգին յոյս յայտնեց, որ երկրին մէջ վանապան դեկավարութիւններ ըլլան պօրտուր եւ գիտակից, իսկ ընկերութիւնը հիմնուած ըլլալ արդարութեան եւ ապատուութիւններու վրայ:

### ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂԱՄԱՆ ԿԱՐԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԱՅՎԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ



Երէկ, Աւագ Ուրբաթ, Լիբանանի հայկական բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցան Քրիստոսի խաչելութեան յիշատակի եւ թաղման կարգի արարողութիւններ:

Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Նաչբեան հանդիսապետեց՝ եւ քարոզեց Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուր յատկապէս այս տարի հաւատացեալ մեր ժողովուրդը հոծ ներկայութիւն էր:

Նոր Մարաշի թաղերուն մէջ թափօրին ընկերակցեցաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյ շրջակայքը, գլխաւորութեամբ Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարքի, որ նաեւ քարոզեց համանուն եկե-

ղեցւոյ մէջ:

**ՉԵՐ ՏԵՍԱԿԷՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է**

«Վանայ Չայն»-ն ուղղակի ձայնափողով շաբաթական յայտագիրը՝

**ՏԵՍԱԿԷՏ**

Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին

Սիւր՝  
**ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ**

Կը խօսին՝  
**ԽՈՒՄԸ ՄԸ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ**

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէք «Վանայ Չայն»՝ 01-267657 եւ 01-241199 քիներուն եւ տուէք ձեր կարծիքը:

**ՎԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ**

**Ս. ՉԱՏԿՈՒՄԱՆ ՏՈՒՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 20 Ապրիլ 2003, Յիսուսի հրաշափառ Ս. Յարութեան տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ հայրապետական Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Ս. Աթոռոյս վեհափառ հայրապետ՝

**Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Ս. Պատարագի քառաձայն երգեցողութիւնը պիտի կատարուի կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբին կողմէ՝ ղեկավարութեամբ Ընդ. Տ. Սակար արք. Ազգարեանի:

Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00  
Ս. Պատարագ ժամը 10:00  
Հայրապետական պատգամ ժամը 11:00

Սիրով կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները ներկայ գտնուելու սուրբ եւ անմահ պատարագին, լսելու վեհափառ հայրապետի պատգամը եւ հոգեպէս վերանորոգուելու Ս. Յարութեան Խորհուրդով:

ԵԱՆՕԹ.- Ս. Յարութեան տօնին առիթով, վեհափառ հայրապետը վեհարանի դահլիճին մէջ շնորհաւորութիւններ պիտի ընդունի պատարագէն ետք մինչեւ ժամը 1:00, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00:

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը.  
«ԱՆԳՐԱՆԻԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**ԱՊՐԻԼԵԱՆ ՉԵՌՆԱՐԿ**

Գլխաւոր բանախօս՝  
**ՏԻԱՐ ՄԻՇԷԼ ԷՏՏԷ**

(Նախկին Գաղարար)

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ՆՊԱՍԵՐ  
ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿՐՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, Հ. Բ. Ը. Մ. Ս. Տեմրձեան կեդրոնի հանդիսարանին մէջ:

### ՆԱԽԱՐԱՐ ՊՈՒԷՅՉԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Կենսոյրոտի նախարար Ֆարէս Պուէյչ երէկ այցելեց Պաապտա եւ ընդունուեցաւ նախագահ Կոր. Լահուտի կողմէ:

Ան այցելեց նաեւ Պքերքէ, ուր տեսակցեցաւ մառնիներու Նաարալլա Սֆէյր պատրիարքին հետ:

Կէսօրէ ետք Պուէյչ իր բնակարանին մէջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ներկայ գտնուեցան երեսփոխաններ Ֆարիտ Խապէն եւ Ապպաս Հաշմ:

Պուէյչ ասուլիսին ընթացքին յայտնեց, թէ ինք պիտի մասնակցի կառավարութեան աշխատանքներուն եւ վերահաստատեց, որ ինք միշտ ալ պահանջած է ազգային միասնականութեան օրինակելի կառավարութիւն մը:

Պուէյչ յայտնեց, որ նոր կառավարութիւնը աւելի առաջնահերթ դասած է երկրին գերագոյն շահերը քան կառավարութեան նոր կազմին մէջ համայնքային ներկայացուցչութեան հարցը կամ շահերը: Ան աւելցուց, որ կառավարութիւնը «պայթումներու խաղ» պիտի չխաղայ եւ ինք ոչ միայն պիտի գործէ կենսոյրոտային միջավայրէն ներս, այլ նաեւ քաղաքական, տնտեսական եւ ընկերային միջավայրէն ներս:

Պուէյչ աւելցուց, որ հակառակ կենսոյրոտի նախարարութեան թերութիւններուն՝ պիտի աշխատի իր ազգային սկզբունքներով եւ կեցածքներով լուծելու համար անյոյժ մնացած հարցերը:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

Այսօր Վանայ Չայնէն ունկնդրեցէք Հ. Յ. Գ. Լիբանանի Հայ Դատի Մարմինին պատրաստած «Հայ Դատը Այսօր» յայտագիրը, ժամը 2:30ի լուրերէն անմիջապէս ետք

- Ճաբրուան մտածումը
- Լուրեր Հայ Դատի մասին
- Պատմական ակնարկ՝ անցեալէն այսօր
- Կարգադրոյց Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ եւ Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբի ներկայացուցիչ ԸՆԿ. ԿԱՐՈ ԱՐՄԵՆԵԱՆԻ հետ:

**ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՈՒ ԶԱՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՐ ՄՐՔՈՑ ՎԱՐԳԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ**

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին ուրախ առիթով, Կիրակի, 20 Ապրիլ 2003ին, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր Ս. Պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

**ԸՈՂՁ. Տ. ՎԱՐԱԳ ՎՐԴ. ԹՕՓԱԼԵԱՆ**

Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30  
Ս. Պատարագ ժամը 9:30  
Քարոզ ժամը 10:30

Երգեցողութիւնը պիտի կատարէ եկեղեցւոյս դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ դպրապետ պրն. Սարգիս Գոչիկեանի:

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ մեր ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին եւ հաղորդուելու օրուան ցնձառի խորհուրդով ու պատգամով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ  
Ս. ՎԱՐԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**Ս. ՉԱՏԿՈՒՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՊԱՏԱՐԱԳ**

**Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ**

Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնին առիթով Կիրակի, 20 Ապրիլ 2003ին Սուրբ Նշան Մայր եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Սուրբ եւ անմահ պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

(Առաջնորդ Լիբանանի Հայոց)

Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30ին  
Պատարագ ժամը 9:30ին  
Քարոզ ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ եւ անմահ պատարագին, վերանորոգուելու համար Սուրբ Յարութեան խորհուրդով եւ լսելու առաջնորդ սրբազան իոր պատգամը:

Ծանօթ.- Առաջնորդ Հայր Սուրբ Չատկուան շնորհաւորութիւններ պիտի ընդունի պատարագէն ետք մինչեւ ժամը 1:00 եւ կէսօրէ ետք ժամը 4:00էն 6:00. քաղաքի Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**ՄԵՆ ԺՈՂՁԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ**

**ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**

Կը ներկայացնէ՝  
**ՊՐՆ. ԿԱՇԷ ԹԱՃԵԱՆ**

Սիւր՝  
**ՀԱՅԵՐՈՒ ԿԱՅՔ ՀԱՍՏԱՏԵԼԸ ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ**

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 6:30ին, Campus Des Sciences Humaines - Rue De Damas, Bloc C - 5րդ յարկ:

ՀՐԱԿԵՐ

**ՄԱՀԱԶԴ**

Տիկին Լուսին Խորոզեան եւ զաւակները՝ Թորոս եւ Յակոբ

Տէր եւ տիկին Սիմոն եւ Մարիա Յակոբեան եւ զաւակուհիք

Տէր եւ տիկին Ջաւէն Խորոզեան եւ զաւակուհիք

Տէր եւ տիկին Ջոհրապ Խորոզեան եւ զաւակուհիք

Տէր եւ տիկին Յակոբ Խորոզեան եւ զաւակուհիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

**ԳՐԻԳՈՐ ԽՈՐՈԶԵԱՆԻ**  
(Ծնեալ՝ 1941ին)

Մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին, իր բնակարանին մէջ, Հալէպ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 13 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Հալէպի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իրրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Հալէպի մէջ, հանգուցեալին բնակարանը եւ Պէյրութ հանգուցեալին եղբոր Ջոհրապ Խորոզեանի բնակարանը, Այն Ալա, Աքշանէ, Երեքշաբթի 22 եւ Չորեքշաբթի 23 Ապրիլին: Հեռ. 03-217744:

**«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ՎԱՐՈՒՄ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ**

- ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում
- ժամը 10:00 Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Սրբ. պատարագի ուղղակի ձայնասփռում.
- ժամը 12:00 Զաղաքական լուրեր/հայերէն
- ժամը 1:00 Ազգային-յեղափոխական երգեր
- ժամը 2:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
- ժամը 4:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
- ժամը 6:30 Զաղաքական լուրեր/հայերէն

**ՏՈՔԹ. ՅԱԿՈՒՐ ՄԵԼԷՔԵԱՆ**  
(ՍԱՍՆԱԳԵ՝ ՆԵՐՔԻՆ ԸՒՒՆԱՂՈՒԹԵԱՆՅ)

Յարգոյ հիւանդները կ'ընդունի իր նոր դարմանատան մէջ:

Պուրճ Լամուտ, «ԱՖԵՏ»ի շէնք, Յրդ. յարկ, հեռ. 01-251365 եւ 03-341362:

# ԿԸ ՄԵՐԺԵՆՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆԿԱՏԱՄԲ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱՆՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԿՐՄԷ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Նոր կառավարության կազմում ինչու էր դրձեալ յուսախաբուրութիւն պատճառեց ընդհանրապէս Լիբանանի ժողովուրդին եւ նաեւ Լիբանանի հայ համայնքին: Որքան ճիշդ է այսպէս հասկենալ կերպով նոր կառավարութիւնը նշանակելը: Ո՞ր է ազգային միասնականութիւնը նոր կառավարութեան կազմին մէջ, պահանջ մը, որ որեւէ ժամանակեւ աւելի հրամայական անհրաժեշտութիւն է այսօր, նկատի ունենալով չըջանի ընդհանուր կացութիւնը:

Մենք կը յարգենք հանրապետութեան նախագահին ու վարչապետին իրաւասութիւնները: Կառավարութեան մը նշանակման մէջ անկասկած որ անոնք պէտք է ունենան իրենց տեսակէտները, նկատի ունենալով տեղական ու շրջանային պայմաններն ու զգայնութիւնները: Սակայն կը սպասենք միաժամանակ, որ յարգուին համայնքներու սպասումները, ներքին զրուածքները ու ներկայացուցչական իրաւունքները:

Ներկայ կառավարութեան կազմութեան մէջ սրբազրուեցաւ նախկին կառավարութեան կազմութեան ընթացքին կատարուած սխալը եւ հայ համայնքը ունեցաւ երկու նախարարական աթոռ: Մենք մեր ուրախութիւնը եւ գնահատանքը կը յայտնենք այս գծով: Սակայն, այս անգամ կատարուեցաւ ուրիշ սխալ մը, այլ խօսքով՝ նկատի չառնուեցաւ մեր համայնքի ամբողջական ու լիիրաւ ներկայացուցչութիւնը:

Անկասկած, պրն. Գարիմ Բազրատունին քաղաքական փորձառութիւն ունեցող անձ մըն է: Սակայն, հարց կու տանք, թէ ներկայ կառավարութեան կազմին մէջ ան Փաղանգաւոր կուսակցութիւնը կը ներկայացնե՞ր, թէ՛ հայ համայնքը: Համայնքային պատկանելիութիւնը ձեւական ըլլալէ անդին պէտք է դառնայ գործնական պատկանելիութիւն եւ մասնաւոր իր արտայայտութիւնը պէտք է գտնէ ներկայացուցչական իմաստով: Յստակ տարբերութիւն մը կայ պատկանելիութեան եւ լիիրաւ ներկայացուցչութեան միջեւ: Կառավարութեան կազմութեան մէջ քաղաքական ներկայացուցչական տարագին առընթեր պէտք է նաեւ կարեւորութեամբ նկատի առնուին համայնքային ներկայացուցչութիւնը եւ անոր ամբողջական մասնակցութիւնը որպէս հիմքը եւ միասնականութեան ու գորութեան աղբիւրը կառավարական կազմին:

Որպէս հոգեւոր պետ մենք չենք կրնար թարգմանը չհանդիսանալ մեր համայնքին մօտ շարունակուող յուսախաբուրութեան եւ ընդզուգումին՝ իր նկատմամբ եղած անտեսումներուն պատճառաւ, որպէս հետեւանք յատկապէս վերջին տարիներուն կառավարական կազմերուն, տրուած նախարարութիւններուն եւ կատարուած նշանակումներուն առիթով յստակօրէն յայտնաբերող: Մենք կը մերժենք այս վերաբերումը հայ համայնքին նկատմամբ: Նման մտեցումներն ու անտեսումներն ոչ միայն ընդզուգում կը յոռաջացնեն համայնքի մը գաւակներուն մօտ, այլ նաեւ պետութիւն-ժողովուրդ խրամատրաւելի կը խորացընեն:

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 88 ՄԵՆԱԿԻՆ ՍՈՒԹՈՎ

### «ՀԱՅ ԴԱՏՈ ԱՅՍՕՐ» ԹԵՄԱՅՈՎ ՁԵՌՆԱՐԿ



Հայկական Յեղասպանութեան 88ամեակին առիթով Հ. Յ. Դ. ԼԵՄԻ «Հայաստան» մասնաճիւղի կազմակերպութեամբ երէկ երեկոյան ժամը 8:00ին «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Մերժ Թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ Դատը Այսօր» թեմայով ձեռնարկ:

Բացման խօսքը կատարեց «Հայաստան» մասնաճիւղէն ընկ. Թամար Տէր Դաւիթեան, որ շեշտեց, թէ Ապրիլ 24ը դադարած է սուգի օր ըլլալէ եւ դարձած է ուրախութեան օր: Անորաւորութեան դէմ պայքար: Ան յայտնեց, որ այդ պայքարը պիտի շարունակուի մինչեւ որ աշխարհի բոլոր երկիրները ալ յատկապէս Թուրքիա ճանչնան Հայկական Յեղասպանութեան պատմական իրողութիւնը:

Բացման խօսքէն ետք տեղի ունեցաւ «Հայաստան» մասնաճիւղին կողմէ պատրաստուած «Հայկական Յեղասպանութեան ճանաչման հոլովոյթը» խորագիրով վիտէօ երկի ցուցադրութիւն:

Օրուան քանախօսն էր ընկ. Յակոբ Հանտեան, որ ըսաւ. «Ապրիլ 24ը մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերու վրայ արտասուելու է անոնց սուգը պահելու առիթ մը չէ միայն: Ապրիլ 24ը նաեւ պայքարի թուական մըն է»: Ապա, խօսելով Հայ Դատի մասին, ընկ. Հանտեան ըսաւ, որ Հայ Դատը այսօր կը միտի վառ պահել այն տեսլականը, որուն նպատակն է համախմբուիլ ապառ, անկախ եւ Միացեալ հայրենիքի մը մէջ՝ «սկսելով Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքին, անցնելով Չուսիքէն եւ Նախիջեւանէն, հասնելով մինչեւ Արեւմտահայաստանի բռնագրաւուած բոլոր հողերը»:

Ընկ. Հանտեան անդրադարձաւ Հայ Դատի փարգազման գործընթացին եւ հայ պատագրական փնէտլ պայքարի ծաւալումին՝ Խրիմեան Հայրիկի «Երկաթ շերտի» պատգամէն մինչեւ հայկական կուսակցութիւններու կայմարումը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութիւնը:

Բանախօսը անդրադարձաւ Հայկական Յեղասպանութիւնը հերքելու Թուրքիոյ քաղաքականութեան, իսկ միւս կողմէ միջազգային ընտանիքին մօտ Յեղասպանութեան ճանաչում ապահովելու Հայ Դատի գրասենեակներու աշխատանքին:

Ընկ. Հանտեան ապա շեշտեց հայ երիտասարդին դերը՝ որպէս Հայ Դատին տէրը: Ան դիտել տուաւ, որ «Հայ Դատի արժանաւայել յարթանակի մը ապահովման ի խնդիր անհրաժեշտ է ամուր եւ անասան պահել մեր ազգային կեանքի երեք սիւները հանդիսացող հայ ընտանիքը, հայկական եկեղեցին եւ հայ դպրոցը»: Ան յայտնեց, որ այս երեք սիւները ամուր պահելու համար անհրաժեշտ է գիտակցիլ, որ «պորութիւնը միութեան մէջ է»:

Բանախօսութենէն ետք տեղի ունեցաւ կենդանի պատկեր, որուն ընթացքին «Աղբալեան» եւ «Գ. Նժդեհ» պատանեկան միութենէն խումբ մը պատանիներ ներկայացուցին Սիամանթոյի «Պար» եւ «Կոյր»ը, ինչպէս նաեւ Թալեաթի ահաբեկումը:

Arabic and Persian text at the top of the page, including the word 'السفير' (The Ambassador) and other phrases.

«Պարթէլ» ընկերութեան հետ կնքեց Իրաքի վերաշինութեան վերաբերեալ առաջին համաձայնագիրը՝ 690 միլիոն տոլար արժողութեամբ: Թերթը նշած է, թէ Ամերիկա հաղորդակցութիւններ կը կատարէ օտար պետութիւններու հետ՝ Իրաքի ապահովութեան աշխատանքներու անոնց մասնակցութիւնը ապահովելու համար:

«Նահար» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ ԵՈՒՆԵՍԿՕ իրաքեան մշակութային եւ ժառանգութեան նուիրուած հիմնադրամ մը կը յառաջացնէ, իսկ Պուշի մշակութային հարցերու երեք խորհրդակցանքներ կը հրաժարան բռնէր», գրած է «Նահար» օրաթերթը:

Ըստ «Տիար»ի, այս կառավարութեան կազմութիւնը Լիբանանի պատմութեան մէջ աննախընթացօրէն արագ կազմուած առաջին կառավարութիւնն է: Կառավարութիւնը ծրարական ապրիլեցութիւն կ'ունենայ Պերքէի վրայ, վերջինին Դամասկոսի նկատմամբ արտայայտուած կեցուածքին վերաբերեալ:

«Սաֆիր» գրած է, թէ իշխանութեան հաւասարակշռութիւնը դարձեալ իսխտեցաւ, իսկ Պերքէ միջամուխ չ'ըլլար: «Մուսաքալալ» նշած է, թէ 30 հոգինոց կառավարութեան մէկ շորորդը սորեկներ են:

«Նահար»ի համաձայն, Ուաշինկթըն լայնաբերեց, որ Սուրիոյ տեղեկութիւններ փոխանցած է՝ իրաքի պատասխանատուներու մասին: Սուրիա ամբողջովին կը մերժէ իր հողերէն ներս տեղի ունենալիք որեւէ պէնքի քննութիւն:

Ըստ թերթին, Պարապան Թիքրիթի ձեռքարկութեան Պաղատան մէջ, իսկ Ժալալի սկսաւ խորհրդակցութիւններ ունենալ իրաքեան փոխանցման կառավարութիւնը կայմելու համար: Ուաշինկթըն

ուղղեց Իրաքէն աներիկեան ուժերու հեռացման:

«Լիւր» գրած է, թէ Շարէի Ասատի նամակը փոխանցեց Մուսաքալալի տեսակցեցաւ Ամր Մուսայի հետ: Ամերիկեան ուժերը կը յայտարարեն, թէ Պաղատան մէջ ձեռքարկութեան Թիքրիթին: Իրաք կը խառնա քննարկումներ անոնց մասնակցութիւնը ապահովելու համար:

Իրաքի դրացի երկիրներու արտաքին գործոց նախարարները Ռիատի մէջ կը գումարեան ժողով մը, քննարկելու համար յետ պատերազմեան իրաքեան կացութիւնը:

«Մուսաքալալ» գրած է, թէ Պաղատան մէջ բախումներ տեղի կ'ունենան եւ իշխանութեան շուրջ տարակարծութիւններ կը շեշտուին: Թերթը նշած է, թէ Փենթակոն կը յայտարարէ, որ տակաւին կանոնի է Սուրիոյ դէմ ուղղուելիք յարձակումներու մասին խօսելու:

Ըստ թերթին, Եւրոպայի պատմութեան Մուսաքալալի պատմութիւնը կը յայտարարէ, որ իսաղաղութեան քարտէք պիտի իրապարակուի, ինչպէս որ ծրագրուած է: «Տիար»ի համաձայն, Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ յայտնած է, թէ ինք պիտի օժանդակէ շրջանին մէջ քանդումի պէնքերէ ձեռքարկութեան:

Նախագահ Շիրաք դիտել կու տայ, թէ թանգարանի կողոպուտը ոճիւր մըն է մարդկութեան դէմ: «Սաֆիր» գրած է, թէ Սուրիա կ'ողջունէ Փաուլըի շրջան ապցելութիւնը, որ կը նախատեսուի Մալիան: Շարէի կը յայտարարէ. Սուրիոյ տարածքին հաւաքական քանդումի պէնքերու վերաբերեալ ոչ մէկ քննութիւն պիտի արտօնենք:

Ըստ թերթին, Պարապան Թիքրիթի ձեռքարկութեան, իսկ Ապտ Ապի Հաքիմ կոչ

## «ԿԱՆԱՅ ՁԱՅՆ»ԷՆ

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ՝ ԱՐԱԲԵՐԵՆՈՎ, ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Յեղասպանութեան հաւաքական յիշողութեան, այս առնչութեամբ երիտասարդութեան յայտնաբերումներուն, նոր սերունդին դաստիարակութեան, ինչոյէն նաեւ Հայկական Յեղասպանութեան ճանաչման մէջ քարոզչական մեքենաներուն դերին մասին, Երկուշաբթի 21 Ապրիլէն մինչեւ Ուրբաթ 25 Ապրիլ, կէսօրէ երբերը ժամը 3:00ին, «Կանայ Ձայն»էն յիշիկ ձայնասփռոյթի հարցազրոյցներ՝ արաբերէնով, հերբեալ ժամանակացոյցով.

● ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. 21 ԱՊՐԻԼ  
Նիւր՝ «Հայ մայրը եւ Հայկական Յեղասպանութեան հաւաքական յիշողութեան փոխանցումը՝ նոր սերունդին»: Կը խօսին՝ Տիգրիս ԱԼԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ եւ Տիգրիս ՍԻԼՎԱ ՍԱԶՐԵԱՆ:

● ԵՐԵՎԱՆԻԹԻ. 22 ԱՊՐԻԼ  
«Հայ աշակերտը եւ Հայկական Յեղասպանութիւնը»: Կը խօսին՝ ԱՐՓԻ ՊՈՅԱՅԵԱՆ (Ազգ. եղիշէ Մանուկեան քոլէճ), ՀԱՄԲԻԿ ԳՈՒՐԻ (Ս. Հոփսիսմեանց բարձր. վարժարան) եւ ՍՆՆՍ ՁԵՅԹԼԵԱՆ (Մելանքոն եւ Հայկ Արալանեան ձեմարան):

● ԶՈՐԵՎԱՆԻԹԻ. 23 ԱՊՐԻԼ  
«Հայկական Յեղասպանութիւնը եւ տեղեկատու աղբիւրները»: Կը խօսին՝ ՉԱԻԷՆ ԳՈՒՅՈՒՄՅԱՆ (Ֆիլոլոգ Թի. Վի.) եւ ՄԻՇԷԼ ՄՈՒՍԱ («Լօրիս Լը Ժուր»):

● ՀԻՆԳՇԱՆԻԹԻ. 24 ԱՊՐԻԼ  
ԳՈՎՏ. ԺԻՀՍՏ ՆՍՍՄՍՆ կը վերլուծէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման հարցը շրջանային եւ միջազգային քաղաքականութեան հոլովոյթին մէջ:

● ՈՒՐԵԱՎԹ. 25 ԱՊՐԻԼ  
«Հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն մէջ տեղեկատու աղբիւրներուն դերը»: Կը խօսին՝ ՆՇԱՆ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՐԻՆԵԱՆ (Էն. Թի. Վի.) եւ ՏՈՒԼԱ ՊՇԱՍԼԱՆԻ («Տիար»):

Հայ Կաթոլիկ ՄԵՍՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան

Partner with LCCIEB BRITISH COUNCIL

Ուսանողներու թիւի Աճ

Տարի	Մարտ	Ապրիլ
2001/2002	33	181
2002/2003	43	221

Համակարգիչի լրիւ դասընթացը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

Հարաբանչիւր ուսանող կրնայ ունենալ անուանական email հասցէ [www.mesrobian.com](http://www.mesrobian.com) -ի վրայ

Պուրճ Համուտ, Արաքս փողոց, Հեռ. 260504

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆ

Ս. ԵՂԻՍ ԱԹՈՒՄՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ

ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՄՈՒՄ ԶՐԻՍՏՈՒ

Հայրապետական Սուրբ Պատարագ Պիտի մատուցանելու յաւուր պատշաճի իր հայրապետական պատգամը պիտի փոխանցէ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐՁԱՆԻԿ Տ. Տ. ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Պատրիարք Կաթոլիկ հայոց

Կիրակի, 20 Ապրիլ 2003, առաւօտեան ժամը 10:30ին:  
Յաւարտ Սուրբ Պատարագին, եւ նոյն օրը երեկոյեան ժամը 4:00էն 7:00, Ամենապատիւ Հոգեւոր Տէրը պիտի ընդունի Ս. Յարութեան տօնին առիթով, հաւատացեալներու շնորհաւորութիւնները եկեղեցոյ հիւրասրահին մէջ:

Բ. - ԶՄՄԱՌՈՒ ՄՍՅՐԱՎԱՆՔ

21, 22 եւ 23 Ապրիլին, Հոգեւոր Տէրը շնորհաւորութիւններ պիտի ընդունի Չմնացող մայրականքին մէջ, առաւօտեան ժամը 10:00էն 1:00 եւ երեկոյեան ժամը 4:00էն 7:00:





ՔՐԻՍՏՈՍ ԿԵԱՆՔԻ ԱՂԲԻՐ

Շարունակում՝ 4րդ էջէն

Մարմնաւոր կեանքով սահմանափակուելու մարդուն մասնագում- թեանց եւ հարցում- ներուն յաւազոյն պա- տասխանը կու տայ Քրիստոս իր յարու- թեամբ, թափուր գերեզ- մանով եւ հրեշտակներու աւետումով:

Կեանքին մէջ, դժնդակ կեանք մը նախատինքով ու դժուարութիւններով բաժին ինկած է իրենց, յուսարով անդենականին մէջ քաղելու իրենց ա- ռաքինութեան պտուղը: Եւ վերջապէս, Քրիս- տոսի յարութեան ներ- շնչումովն է, որ Քրիստոնէութեան մեծ Առաքելը՝ Պողոսը կո- ռնթացիներուն ուղղած իր գրութեան մէջ քրիս- տոնեաները քաջայե- թելով րտաւ. «Ո՛ր է, որ յիմա՞նք քո յաղ- թութիւնը, որ է դը- ժոխք քու խայթոցը»: Մահը հոգեկան ուժին դէմ անգոր է, բարոյա- կան ու յաւիտենական արժէքներու առջեւ դի- մադրողական գորութիւն չունի, ու հաւատքի դէմ պայքարելու անկարող է:

Դարձեալ Պողոս Առաք- եալ կ'ըսէ կորնթա- ցիներուն գրութեան մէջ. «Երբ մահկանացուն հաղթի անմահութիւն, եւ այս ապականացուն՝ անապականութիւն, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը, թէ՛ մահը յաղթութեան մէջ ըն- կըղմեցաւ»: Այդ ան- պարտելի մահը պար- տուեցաւ Փրկչին հրա- շափառ յարութեամբ:

Որով, Քրիստոսի յա- ռութեամբ է, որ մարդ տիրացաւ անմահու- թեան, ու անմահու- թեամբ եղաւ յաւիտենա- կանութեան ճամբորդ: Անոր համար կը փա- ռաբանենք զՔրիստոս եւ կ'ըսենք ցնծադին՝

Փառք Յարութեան քո Տէր:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻԻ ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՀԱՆԳԱՆԱԿԻԶ 3 ԱՆՉՆԱՍՈՒՄԲ 1850ԹՆ Ի ՎԵՐ ԳՈՐԳՎԱԾԱՌ ԸՆՏԱՆԻՔԷ ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ Կը ներկայացնէ ՀԱՅԿԱԿԱՆ - ԿՈՎԿԱՍԵԱՆ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԳ - ԿԱՐՊԵՏԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՎԱՃԱՌՔ Կազմակերպում ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈՒԼԵՃԻ 80ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ Պաշտօնական բացում՝ Ուրբաթ, 25 Ապրիլ 2003, երեկոյան ժամը 7:00ին Յուլիանոսի բաց է ամէն օր Երեքշաբթի, 6 Մայիս 2003, երեկոյան ժամը 5:00տն 9:00: Եւ Վախճանական Ա. Եկեղեցիի համադիա- սրահին մէջ: ՄՈՒՏԵԸ ԱԶՍ

ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ Ս. ՊԱՍԱՐԱԳ ՍՐԲ. ԲԱՌԱՄԻՅՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ Կիրակի, 20 Ապրիլ 2003ին, Ս. Չատուան տօ- ցին առիթով պիտի պատարագէ եւ յաւուր պատշա- ձի քարոզէ ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԻԵՄԷՁԵԱՆ Երգեցողութիւնը պիտի կատարուի եկեղեցւոյս Դ. դասի ՆԱՐԵԿԱՅԻ երգչախումբին կողմէ, Եկմալեան քառասուն եղանակով, խմբավարութեամբ՝ պրն. ԳԵՐՈՂ ՊԵՊԵՆԻՆ: Սկիզբ ժամերգութեան ժամը 7:00ին Ս. պատարագ ժամը 9:30ին Զարոզ ժամը 10:30ին Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու եւ հաղորդուելու սոյն հոգեպա- րար արարողութեամբ: ՍՐԲ. ԲԱՌԱՄԻՅՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳԵՐՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Գ. Մ. Գ. Մրցանակի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2003ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը: Գ. Մ. Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական կողմէ որեւէ նոր, անտիպ, կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր առ ի գնահատում եւ հրատարակութիւն: Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանա- սիրական եւ հայ մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասած ըլլան ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2003: Առաքուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երեք օրինակով: Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատա- րակութեան: Վեհափառ հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Արտաւազդ արք. Թրքեան, Չարեհ արք. Ազնաւորեան, տիար Գեորգ Գանտահարեան (ատենապետ), տիար Պեպօ Սիմոնեան (ատե- նագիր), տղք. Արմենակ Եղիայեան, տիար Պողոս Սնապեան եւ տիար Ժիրայր Դանիէլեան: Դատակազմին հասցէն.- Armenian Catholicosate of Cilicia P. O. Box 70317 Antelias - Lebanon E - Mail: cathcil@cathcil.org Fax: +961 - 4 - 419 724 Դիւան Գ. Մ. Գ. Ս.ի Դատակազմ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Գրական յանձնախումբի կազմակերպութեամբ՝ 1915Ը՝ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՂԵՈՆԸ Կը ներկայացնէ՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ •Գեղարուեստական յայտագիր Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003ին, երեկոյան ժամը 8:30ին, «Աղբալեան» Հ.Մ.Ը.Ս.» մարզաշա- կութային համալիրի «Ս. Թովմասեան» սրահին մէջ: ՀՐԱԽԵՐ

ՄԵՐՉԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ Ս. Յարութեան տօցին առիթով, Մերձաւոր Արե- ւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Սիու- րեան նախագահը եւ Կեղրոնական Մարմինը շնոր- հաւորութիւններ պիտի ընդունի Կիրակի, 20 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 12:00 2:00, Հայ Աւետա- րանական Առաջին Եկեղեցիի ընդունելութեանց դահ- լիճին մէջ, Մեքսիք փողոց, Պէյրութ: Ս. Ա. Հ. Ա. Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ ԴԻՒԱՆ

Ս. ՉԱՏԻԿԸ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ Կիրակի, 20 Ապրիլ 2003ին, Ս. Չատուան տօցին առիթով, Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի հաւատաց- եալները, ներկայ գտնուելու եւ հաղորդակից դառ- նալու օրուան պատգամին: ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՏԻԼ! ԱՏԻՏԻ ՇԷՆՔ Բ. ՅԱՐԿ ԴՆՈ. 01/242556-7 ԶԵՐ ԻՆՔԻՆԱՇԱՐԺԻՆ ԱՊԱՆՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎՍՏԱՆԵՑԷՔ ԱՏԻԼ - Ի

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՅԵԱՆ ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

PHOTO NERSES (Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ) ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 36 photo ֆիլմի նկարահանումը միայն 8,000 Լ. Ո. (Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍԱՅԵԸ ՆԱԵՒ Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + նկարի INDEX մը Կը նկարենք փոքրերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒԱՆ յատուկ յարգարանքով PHOTO NERSES: Պուրճ Համուտ, Բաղաբապե- տարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»ի դիմաց: Հեռ. 01 - 261858 եւ 01 - 255992

ԳՐԱԽՈՒԱԾ ՕՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ. ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԲՈՒԼԵՃԻ ՎԱՐՉ ՄԱՐՄԻՆ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ 3 ԱՆՉՆԱՍՈՒՄԲ «ԸՆԹՐԻԸ» 7 ՅՈՒՆԻՍ 2003 ԿՈՒՉՈՒՆ •Զարտուղարուի մը՝ համակարգիչ գիտնալը պայման: •Ոսկերիչ (ստեղծել) վարպետներ: Դիմել հեռ. 01 - 242549: ԿՈՒՉՈՒԻ •ԸՆԹԱՊԻ խնձորի ըն- տիր քացախ արտադրող ԸՆ- ՇԻՇԵԱՆ հաստատութիւնը Լիբանանի շուկային համար կը փնտռէ ներկայացուցիչ- ցրուիչ ընկերութիւն մը. դի- մել՝ հեռ. 02/93/524255 թիւին (ԸՆԹԱՊ):

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ՎԱՀՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ՃԵՐԷՃԵԱՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆՔ»Ի 2003 Ապրիլին հաստատուած է «Վահրիճ եւ Վերժին Ճերէճեան Թատրերգութեան Մրցանք»ը՝ ի յիշատակ հասարակական գոր- ծիչ եւ մտաւորական Վահրիճ Ճերէճեանի, սա- տարելու համար Սփիւռքի մէջ բատերական գրականութեան զարգացման: Մասնակցութեան պայմաններն են. ա) Մրցանքին կրճան մասնակցիլ Սփիւռ- քահայ այն բոլոր գրողները, որոնք հայերե- նով գրուած բատրերգութիւն մը, կամ բատ- րերգութիւններու փունջ մը, կը ներկայացը- նեն դատակազմին: բ) Ներկայացուած բատրերգութիւնը ըլլա- լու է անտիպ, մեքենագրուած կամ համակար- գիչի վրայ շարուած, երկու օրինակով: գ) Մրցանակի արժանացած բատրերգու- րեան նիւթական պարգելը 3000 ամերիկեան տոլար է: Երկին հրատարակութեան ծախսե- րը կը հոգացուին հիմնադրամին կողմէ՝ իբ- րեւ «Վահրիճ եւ Վերժին Ճերէճեան Թատրեր- գութեան Մրցանք»ի մատնաշար: դ) Երկերը հասցնելու պայմանաժամն է 30 Սեպտեմբեր 2003: ե) Դատակազմի անդամներն են. Վերժին Ճերէճեան, Ժիրայր Դանիէլեան, Տղք. Արմե- նակ Եղիայեան, Պեպօ Սիմոնեան, Պերճ Ֆազլեան: ԴԱՏԱԿԱԶՍ «ՎԱՀՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ԺԵՐԷՃԵԱՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆՔ»Ի Առաքումները կատարել հետեւեալ հասցէին.- Vergine Djeredjian P. O. Box : 510 Beirut - Lebanon

FUEL CARDը գործածեցէք Դեմոնի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային: Երբ մագուրս պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն: ►MANAR - Տորա ►ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Համուտ ►BASSIL - Տորա, կամուրքի մօտ ►AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ ►SPEED - Հանքաշ, Կալէրի հիթիատ ►ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա» ►MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց ►MALLAH - Հարեթ Դաուարնէ ►MALLAH - Պալմիմ ►MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի ►CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ եկեղեցւոյ մօտ ►SAAD - Մար Սիպայէլ ►SPEED - Նահր, «Փեօփ» ընկերութեան մօտ ►PHOENICIA - Այնճարի մուտքին ►MALLAH - Պաապտէթ



# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

## ՉԵՏԵՂՄԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ «ՏՐԵՍԻՆԿ - ՌԻԵՏՐԵՍԻՆԿ»



Լիբանանցի եւ հնդիկ երկու արւեստագէտներ, որոնք կը բնակին Լոնտոն, վերադարձած են Լիբանան՝ ցուցադրելու իրենց գործերը: Մէյ Դուսուպ եւ Շահին Մերալի ներկայիս «Չիքո Վաու» ցուցադրահին մէջ կը ներկայացնեն «Տրեսինկ - Ռիետրեսինկ» խորագրեալ իրենց ցուցահանդէսը, որ բաղկացած է չեւտեղման արուեստի աւելի քան յիսուն գործերէ:

Չեւտեղման արուեստի այս գործերին իւրաքանչեւ թիւնը այն է, որ անոնք կը միաձուլեն արեւելեան ու արեւմտեան մշակույթները: Համաշխարհային ցամաքային ալիքին հետ աշխարհով մէկ տարածուած արեւմտեան ու մանաւանդ ամերիկեան ժողովրդային մշակութի խորհրդանշաններէն Ռուիքրմէնը, Սիպայըրը կը երկու արուեստագէտներուն կողմէ զգեստաւորուած են արեւելեան ֆէստրով ու շարժումներով: Այսպիսով, արուեստագէտները կը փորձեն պատասխան գտնել այն հարցումին, թէ արդեօք հագուածքը կը կերտէ՞ ան-

### Ցուցադրուած գործերն օրինակ մը ֆետոյ Աւստրալիոյ

հատականութիւնը, եւտրեսինկ» ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 26 Ապրիլ: Չայն կարէյի է այցելել տաւուտեան ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

### ՕՐԵՆԻՈՅԹ



ՀԱՐԱԹ,  
19 ԱՊՐԻԼ 2003  
ՊԵՅՐՈՒԹ  
ՄԱՍԱՍԲ ԱՄՊՈՏ  
ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ  
ՅԵՐԵՎ՝ 22°C  
ԳԻՇԵՐ՝ 16°C  
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝  
68%

### Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

#### ԱՒԱԳ ՀԱՐԹՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ

●ԿԵՐԿԵՆ 20 ԱՊՐԻԼ 2003. Ս. ԶԱՏԻԿ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՄ ԶԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ  
- Ժամերգութիւն՝ առաւօտեան ժամը 7:30ին  
- Ս. Պատարագ՝ ժամը 9:30ին  
Կը պատարագ եւ կը քարոզէ  
**ԳԵՐԸ. Տ. ԶԱՐԵՇ ԱՐՔ. ԱՂՆԱԿՈՒՄՆ**

●ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. 21 ԱՊՐԻԼ 2003  
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐԵԼՈՅԻ  
- Ս. պատարագ՝ ժամը 8:00ին  
- Ֆրոն Չըպպէի Ազգային գերեզմանատան Ս. պատարագ, ժամը 10:30ին  
- Հաւաքական գերեզմանօրհնէք՝ ժամը 11:30ին

●Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու եւ հաղորդուելու վերոյիշեալ սրբազան արարողութեան:  
**ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

### Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

#### Ս. Զատկուան տօնին

անթով պիտի պատարագ եւ քարոզէ՝  
**ԳԵՐԸ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱՔԵԱՆ**  
Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30ին  
Սկիզբ պատարագի ժամը 10:00ին  
Քարոզ ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու սոյն արարողութիւններուն:  
**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

### Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՆ

ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄ ԶԻՍՏՈՍԻ

Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը, սիրով կը հրաւիրէ հաւատացեալ ժողովուրդը մասնակցելու հանդիսաւոր Ս. պատարագին, զոր պիտի մատուցանէ եւ յաւուր պատշաճ քարոզէ՝  
**ԱՐԿԻ. ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱԶԳԱՐԵԱՆ**  
Կիրակի, 20 Ապրիլ 2003ին:

**Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՆ**

### ★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★**ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)  
Ամառնային արձակուրդի մասին այժմէն իսկ կը մտածէք, լաւ է որ կարգադրութիւններու սկսիք: Թեւեւ տակաւին ժամանակ կայ, բայց կանուխեմ պատրաստուիլը օգտակար է:

★**ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)  
Տնտեսական մարզի վերաբերեալ լաւ լուծումներ գտած էք. հարկ է որ պահէք ձեր ծրագրած որոշումը, որպէսզի դրամական նեղութիւն չունենաք:

★**ԵՐԿՈՒՇԱՐԹԻ** (22 Մայիսէն 21 Յունիս)  
Երբ պիտի մտիկ ընէք ձեր կնոջ կամ ձեր ամուսնոյն խրատները: Ի վերջոյ անյարմար է ամէն հարց առանձին որոշել: Համբարշտութիւնը մի խախտէք ընտանեկան յարկի տակ:

★**ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)  
Բազմաթիւ ընելիքներ ունիք եւ պիտի չկարենաք բոլորին նոյն ձեւով հասնիլ՝ կազմակերպելու կամ իրագործելու համար: Այսուհանդերձ ջանացէք հասարակչոյն աշխատանքը:

★**ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)  
Ձեր սիրտը կը բարախէ մէկու մը համար, զոր տեսնելու կարելիութիւնը չկայ այսօր: Քիչ մը եւս համբերեցէք զինք տեսնելու: Այժմէն պատրաստեցէք ձեր ընելիքները եւ ապագայի ծրագիրը:

★**ԿՈՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)  
Կը ջանաք մոռնալ անցեալին պատահած անհանդի դեպքերը, բայց ատիկա ոչինչ կը ծառայէ. չէք կրնար ձեր դէմքը քողարկել եւ ծածկել եղածը:

★**ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)  
Եթէ ունիք եղբայրներ եւ քոյրեր կամ հարազատներ, զանոնք հրաւիրեցէք ձեր մօտ՝ անցեալի յուշերէն անոնց հետ գրուցելու եւ գուրաք ժամանակ մը անցընելու:

★**ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)  
Ոչ անհրաժեշտ ծախսերը մէկ կողմ դրէք, ձեր դրամը յատկացուցէք կարեւոր գնումներու: Ասիկա արդէն շահ մըն է ձեր համար: Խնայասէր եղէք եւ ժուժկայ:

★**ԱՂԵՂՆԱԿՈՒՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)  
Կենսուրախ էք, կեանքը ձեզի կը թուի վարդագոյն: Ձեզի հետ պիտի ուրախանան նաեւ ձեր հարազատները: Միշտ լաւատես եղէք, որպէսզի առողջ մնաք:

★**ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)  
Եթէ առողջական հարցեր ունեցած էիք, անոնք կը պատկանին անցեալին: Մտահոգուելիք ոչինչ ունիք այսօր: Կեանքը ապրելու ձեր փափաքը շատ մեծ է այսօր:

★**ՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)  
Պիտի հրաւիրուի խնայողի մը, ուր հրաւիրեալներէն ոչ ոքի ծանօթ էք: Բայց շուտով նոր բարեկամներ պիտի ունենաք հոն: Երեկոն պիտի անցնի գուրաք:

★**ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)  
Եթէ առեւտուրով կը զբաղիք, այսօր դժուարութիւն պիտի ունենաք ձեր աշխատանքը հունաւորելու: Օրը նպաստաւոր չէ շահեր ապահովելու: Եղէք համբերատար:

### ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ

#### ԱՒԱԳ ՀԱՐԹՈՒՄՆ ԵՒ Ս. ԶԱՏԻԿՈՒՄՆ ԱՆԹԻԼԵԱՍԻ ՄԵՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՉ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետի նախագահութեամբ, Անթիլիասի Մայր տաճարին մէջ Աւագ Շաբթուան յատուկ եկեղեցական արարողութիւնները պիտի կատարուին հետեւեալ ժամանակացոյցով:

ԱՒԱԳ ՀԱՐԹՈՒՄՆ	Առաւօտ	8:00ին
19 Ապրիլ - Ճրագալոյցի պատարագ		4:00ին
Ս. ԶԱՏԻԿ - Ժամերգութիւն		8:00ին
20 Ապրիլ - Ս. պատարագ		10:00ին
ՄԵՆԵԼՈՅ - Ժամերգութիւն		8:00ին
21 Ապրիլ - Ս. պատարագ		9:00ին

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի գաւակները, ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեանց եւ վերանորոգուելու քրիստոնէական հաւատքով ու աւանդութիւններով:

**ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ**

### ՀԱՅԿԱԶԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

#### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՄ

## ՎԵՐԱՊՐՈՒՄ

#### ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ

Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 6:00էն 8:30  
Արթիւր Մաթոսեան արուեստի կեդրոն - Մուկար շէք  
ՀԱՅԿԱԶԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ - Քանթարի  
Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 5 Մայիս 2003:

### «ԱԶԳԱԿ»

#### ՀԵՌՈՒՄՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: -258526, 260115 եւ 241274:

### ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5420

#### Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | ԸՆԴՈՒՂԱԿԱՆ  | ՈՒՂԱՆԱՅԵԱՑ   |
|---|--|
| 1. Կարաւաններու իջեալն - Մէկը:                                      | 1. Դատապաշտպան անձ - Այրուբենէն:                       |
| 2. Արական անուն - Հանրանաչ:   | 2. Եղազ - Էական բայ:                                   |
| 3. Կրկնած տառեր - Նոյն գիրերը - Կատարի (հակ):                       | 3. Իրերայաջորդ գիրեր - Խօսքի մասերէն - Արրահամի հայրը: |
| 4. Զգափոկ:  | 4. Օրինակելի - Մանրաքար:                               |
| 5. Իւրայէլի առաջին քահանայապետը - Կոպիտ:                            | 5. Աւարուժ, կողոպտուժ - Այսինքն:                       |
| 6. Ծանրութիւն - Չեւտեղման:  | 6. Տարածքի միւտը - Անձնական դերանուն - Գաւիթ:          |
| 7. Ածականակերտ մասնիկ - Փոքր խումբ - Զայնահիչ:                      | 7. Փոքրացնող մասնիկ - Խոռոչ, փորք:                     |
| 8. Անօթութեան նուագի - Ժխտական մասնիկ - Կաթսայ:                     | 8. Սարսափահար, լեղապատառ - Աղեկատ:                     |
| 9. Անճարակ - Տեղափոխուած տառեր:                                     | 9. Արեւելոցիչ - Տարիք:                                 |
| 10. Մետաքսագործ որդ - Նուաստ:                                       | 10. Մեծ մայր - Բարեհամբոյր (հակ):                      |
| 11. Մերոպ Մաշտոց հոն - Հիննեց Արցախի մէջ առաջին դպրոցը - Հասկի մագ: | 11. Օժանդակութիւն - Դանդաղի՛ր (հակ):                   |

### ԹԻԻ 5419

#### ԽԱՉԲԱՌԻՆ

#### ԼՈՒԹՈՒՄԸ

1	Թ	Ո	Վ	Ա	Ն	Ե	Ն	Ո	Ս	Մ
2	Ո	Ն	Ո	Ր	Ա	Կ	Ն	Ա	Յ	Ա
3	Վ	Ո	Ն	Պ	Ո	Լ	Ս	Կ		
4	Ա	Ր	Կ	Ա	Ր	Ի	ՈՍ	Ա		
5	Կ	Ս	Ա	Պ	Ճ	Ա	Ր	Պ	Ի	Կ
6	Ա		Ա	Ն	Կ	Ի	Տ	Է		
7	Լ	Ա	Մ	Պ	Ա	Ս	Ա	Ո	Ս	Տ
8	Գ	Ր	Ս	Մ	Ա	Տ	Ո	Ի	Ն	
9	Ք	Ա	Ր	Կ	Կ	Ա	Ս	Ր	Ա	Վ
10	Խ	Մ	Ի	Ջ	Ա	Ր	Կ	Ր	Է	
11	Ի	Կ	Ո	Ի	Ի	Ն	Ք	Ս		

### ԱՅՍՈՐ

- Թատրոն «Էլ Մահֆուզ» ժամը 20:30ին, «Ալ Մատիմա» բառարանահին մէջ, մինչեւ 30 Ապրիլ:  
- Երգախառն եւ պարային թատրոն՝ Մանուր Ռահպանի «Մուր էլ Բաուաթ», ժամը 20:30ին, «Քազիմ Տիւ Լիպան» մէջ, մինչեւ 28 Ապրիլ:  
- Նկարչական ցուցահանդէս՝ Հանիպալ Սրուժի գործերը, «Ժամին Ռուպէլ» ցուցահանդէս մէջ, մինչեւ 2 Մայիս:  
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ Ռանտա Աթալի «Լը Բան տէ կրեմատ», Սուր էլ Նաժմարին, Սայֆի գիւղ, մինչեւ 24 Ապրիլ:

### ԱԶԳԱԿ 50 ՏԱՄԻՒ ԱՌԱՄՁ

292նկտ. 1952

#### ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՉ

Երուսաղէմի միաբաններէն Բարզէն վրդ. Ապատեան, որ պատրիարքարանի փոխանորդն է Իսրայէլի մէջ, հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ այդ գաղութի մասին (Հայ. Եկեղեցի, Փետր. 1953):



Իսրայէլի մէջ 950 հայ կ'ապրի, 5 հարիւր՝ Հայֆայի եւ շրջաններուն, 4 հարիւր՝ Եաֆայի եւ շրջաններուն եւ մաս մըն ալ հրեական Երուսաղէմի մէջ:

Նախապէս Պաղեստինի հայերը բարգաւաճ գաղութ մըն էին մօտաւորապէս 5000 հոգիներ, որոնց մեծ մասը այժմ Հին Երուսաղէմի եւ Յորդանանի կողմէ Պաղեստինի մէջ կը բնակին: Անոնք իրենց սեփական եկեղեցիներով, զպրոցներով եւ մշակութային հաստատութիւններով խաղաղ եւ բարեկեցիկ կեանք մը ունենին: Այն տեան, ինչպէս միշտ, իրենց հոգեւոր ու մտաւոր կեանքը կը ղեկավարուէր Ս. Յակոբեանց փառապան Վան Երեմ, որ Հայ Եկեղեցւոյ պատրիարքական Աթոնն է Երուսաղէմի մէջ:

### ԱՅՍՈՐ՝ 19 ԱՊՐԻԼԻՆ

■1877 - Ռուս-թրքական պատերազմի երկրորդ յայտարարութիւն:  
■1895 - Մայիսեան ծրագրի մշակում՝ հայկական վեց մահանգներու համար:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Հ



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարզասեր հասարակության ծանօթ է, որ այս Կիրակի յետմիջօրէին, Լիբանանի ֆուտբոլի ֆուտբոլիստներն իրենց համապատասխան ֆուտբոլիստներին հանդիպում են Վ.Մ.Մ. պիտի մրցի Վ.Մ.Մ.ի դէմ:

Ինչպէս միշտ, այս տարի եւս հայկական խումբերու հանդիպումը համակիրներու մօտ ստեղծած է լայն հետաքրքրութիւն. վստահ ենք, որ այս Կիրակի օրուան մրցումը չի տարբերիր իր նախորդներէն: Անկախ մրցումի արդիւնքէն, հայկական վոլբոլիստներու պատասխանատուները իրենց համակիրներէն կը պահանջեն խուռներամ ուղղուիլ մարզադաշտ՝ մարզավայել եւ օրինակելի ոճով քաջալեր հանդիսանալով իրենց խումբերուն:

Հայկական խումբերու հանդիպումը ֆուտբոլային մրցումէն վեր յանձնարարական մըն է արտայայտելու լիբանանահայութեան վճռակամութիւնը եւ կենսունակութիւնը, ապացուցելու, թէ անոնց արժանի տեղը եւ դիրքը կը գտնուի Ա. դասակարգին մէջ: Հետեւաբար, այս Կիրակի օր բոլոր ուղղուիք դէպի դաշտ եւ քաջալերենք հայկական խումբերը:

Վ.Մ.Մ.ի ՖՈՒԹԳՈՒԼԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ  
Վ.Մ.Մ.ի ՖՈՒԹԳՈՒԼԻ ԴԻԻԱՆ

## ՊՈՒՆՏՆԱԿԱԿ

### ՊՈՐՈՒՍԻԱ - ՊԱՅԵՐՆ ՏԱՔ ԾԱԿԱՏՈՒՄ

Գերմանիոյ ֆուտբոլի ֆուտբոլիստներու (Պունտնա-լիկա) 29րդ հանգրուանի մրցումներուն, շարժական գագաթի ճակատում տեղի պիտի ունենայ Տորթմոնտի մէջ, ուր Պորուսիա պիտի հիւրընկալէ Պայէրն Միւնխիբը:

Պայէրն, որ կը փորձէ 18րդ անգամ ըլլալով տիրանալ տիտղոսին, ունի բացակայ մարզիկներ: Անիկան անցեալ շաբաթավերջին, իր դաշտին վրայ երկու տարուան մէջ առաջին անգամ ըլլալով պարտութիւն մը կրած էր Վերտըր Պրեմընէն, ինչ որ պատճառ դարձած էր, որ 29րդ դիրքը գրաւող Շտուտգարթ, այժմ 11 կէտով ետ մնայ անկէ:

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

Table with 2 columns: Team names and match times.

Table with 2 columns: Team names and match times.

## ԼԵՎԱՍԻ ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Այսօր՝ Շաբաթ, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան թղլէնի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Մ. ԼԵՎԱՍԻ պասթեթպոլի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ:

Table with 2 columns: Time and match details.

## ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 88ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՉԵՆԱՐԿՆԵՐ

Ա. Շուկու՝ կազմակերպութեամբ Հ. Յ. ԼԵՄԻ «Շ. Միսաբեան» մասնաձեւիդին, Չորեքշաբթի, 23 Ապրիլի երեկոյեան ժամը 8:30ին, «Շետուկ» սրահին մէջ:

Բ. ժողովրդային հանդիսութիւն՝ կազմակերպութեամբ Հ. Յ. Այնճարի դաստիարակչական մարմինին:

Կը բանախօսեն՝  
**ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆ  
ԸՆԿ. ՏՈՔԹ. ԷԼԻ ԹԱՃԵԱՆ**

Գեղարուեստական յայտագիր

Հինգշաբթի, 24 Ապրիլի կեսօրէ ետք ժամը 5:00ին, «Շետուկ» սրահին մէջ:

Հ. Յ. ԱՅՆՃԱՐԻ ԴԱՍ. ՍԱՐՍԻՆ

## ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ - ՊԱՐՍԵԼՈՆԱ «ՈՒՆԵՐԻՍ ԹՇՆԱՄԻ»ՆԵՐՈՒ ԾԱԿԱՏՈՒՄ

Սպանիոյ ֆուտբոլի 30րդ հանգրուանի գագաթի ճակատում տեղի պիտի ունենայ այսօր, երբ Ռէալ Մատրիտ «Սանթիակո Պէնոնապէ»-ի դէմ պիտի խաղայ: Ռէալը իր դաշտին մէջ պիտի հիւրընկալէ իր ռիբերիմ թշնամին Պարսելոնան:

Հակառակ անոր որ Պարսելոնա այժմ կը գրաւէ դասաւորման 12րդ դիրքը, մինչ Ռէալ Մատրիտ՝ պարագլուխի դիրքը, սակայն երկու խումբերուն միջեւ տեղի ունեցած ճակատումները կ'ըլլան գագաթի մրցումներ: Նկատի ունենալով, որ Պարսելոնա յառաջիկայ երեքշաբթի, 22 Ապրիլին շատ կարեւոր մրցում մը ունի կատարելիք Շուվենթուի դէմ («Չէմփիլընգ Լիկ») մրցաշարքի բաւորապէս աւարտականի դարձելով, մարզիչ Ռատոմիր Անթիչ կը մտադրէ իր կարգ մը հիմնական մարզիկները այսօր դաշտ չենբերկայացնել: Այդ մէկէն օգտուելով

Ռէալ Մատրիտ մարզիկներէն Իվան Զելիուէրա կ'ըսէ, թէ Պարսելոնան մտօթով պիտի ձգենք եւ առնուազն 2-0 արդիւնքով յաղթանակ մը պիտի արձանագրենք:

Պարսելոնայի հոլանտացի յառաջապահ Փաթրիք Քլուեիլէրթ մէջն գնով կ'ըսէ, որ իր կարգ

մը յաղթանակ մը արձանագրէ, նկատի ունենալով որ ան Պարսելոնա յաղթանակ չէ կրցած արձանագրել «Սանթիակո Պէնոնապէ»-ի մէջ: Պարսելոնա հոն իր վերջին յաղթանակը արձանագրեց Նոյեմբեր 1997ին, այսինքն նախքան Քլուեիլէրթի ժամանումը:

Ստորեւ՝ 30րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները (ժամերը՝ Պէյրուլի ժամով):

Table with 2 columns: Team names and match times.

## ՎԱՂԸ

Table with 2 columns: Team names and match times.

## ԲԱՆՉԻՕ

### ԱՅՍՕՐ՝ ԵՈՒՎԵՆԹՈՒՄ - Ա. ԷՍ. ՌՈՄԱ ԳԱԳԱԹԻ ԾԱԿԱՏՈՒՄ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Ֆալլիո) 29րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Շուվենթուս այսօր իր դաշտին «Տէլ Աւիլի»-ի մէջ պիտի հիւրընկալէ Էս. Ռոման (8րդ):

Ռոման աւարտականի դարձի մրցումներուն զօնով:

Քարլո Անչելոթիի կարգ մը Ա. Մէ. Միլան, որ այսօր «Սան Սիրօ»-ի մէջ պիտի հիւրընկալէ Էս. Ռոման (13րդ), դաշտ պիտի ներկայանայ առանց խմբա-

կարտութիւն չեն կրած: Նշենք, թէ Պրեշիա ինթէ-րի մնաց կրած է 7 պարտութիւն միայն:

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուլի ժամով):

Այսօր Մայտինի, Ռուի Քոսթայի, Քլարէնս Սիտորֆի եւ Անտրէս Փիլոլոյի կրօնքնայ վիրա-

կարտութիւն չեն կրած: Նշենք, թէ Պրեշիա ինթէ-րի մնաց կրած է 7 պարտութիւն միայն:

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուլի ժամով):

Table with 2 columns: Team names and match times.

## ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

### ԼԻՎԵՐՓՈՒԼ ԲԱՂԱՔԻ ՏԵՐՊԻՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

## «ՎԱՆԱՅ ՅԱՅՆԻ ԱՅՍՕՐՈՒՄ ՅԱՅՏԱԳՐՆԵՐԸ

- ժամը 7:30 «Աւագ շաբթուան խորհրդածութիւն»
- ժամը 8:30 «Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում»
- ժամը 8:45 «Աստղեր»
- ժամը 10:00 «Մշակութային լրատու»
- ժամը 11:30 «Լիբանանեան մամուլ»
- ժամը 12:00 «Մացուր պահենց հայերէնը»
- ժամը 1:30 «Մամուլներու աշխարհ»
- ժամը 2:40 «Շայ Դաւոթ այսօր»
- ժամը 8:00 «Շայ երգաշխարհ»

Անգլիոյ ֆուտբոլի ֆուտբոլիստներու 34րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Մանչեսթըր Եւնայթեդ, թէ իր դաշտին «Օլտ Թրէֆորտ» մէջ պիտի հիւրընկալէ Պլեյքհէմ (7րդ), սակայն կ'ենթադրուի, որ հիւր կազմը կրնայ նեղ կացութեան մատնել դաշտին տերները: Նշենք, թէ երթի մրցումին, Պլեյքհէմը գրաւող Միտլըքսթըրը դաշտը: Ընդհանրապէս այս եղանակին Պորթի «Ռիվըրսայտ» դաշտը այնչդողները միշտ այ դժուարութիւններու դիմաց կը գտնուին իրենք վիրէնք:

Մարզիչ Արսէն Վենկերի կազմը այսօր պիտի ունենայ երկու հիմնական բացականեր: Առաջին հերթին անցեալ Չորեքշաբթի օր Մանչեսթըր Եւնայթեդի դէմ տեղի ունեցած մրցումին (2-2) կարմիր քարտ մը ստացած յետապահ Սոլ Բէնայրը չորս մրցումով կախակալած է: Նոյն այդ մրցումին խմբապետ Փարթիք Վիլքեր, որ վիրաւորուեցաւ, թէ ինչպէս պիտի երկու մրցումով բացակայ է, սակայն այն մտաւախութիւնը կայ, որ ան այս եղանակին անգամ մը եւս չկարենայ դաշտ ներկայանալ:

Հետաքրքրական պիտի ըլլայ Լիվըրպոլը քաղաքի երկու կազմերուն՝ Էվըրթընի եւ Լիվըրպոլի միջեւ տեղի ունենալիք 168րդ տերպին: Նշենք, թէ 1999էն ի վեր Էվըրթըն չէ յաջողած պարտութեան մատնել Լիվըրպոլը:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուլի ժամով):

Table with 2 columns: Team names and match times.

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ Բ. ԳԱՍԿԱՐԳԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

### ՎԱՂԸ՝ Հ. Մ. Մ. - Հ. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ֆուտբոլիստներու 24րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի Պէյրուլի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի կ'ունենայ Հ. Մ. Մ. - Հ. Մ. Ը. Մ. մրցումը, կէսօրէ ետք ժամը 4:00ին: Հայկական երկու խումբերն ալ ապահոված են Ա. դասակարգ բարձրանալու տոմար, հետեւաբար այս մրցումին արդիւնքը անոնցմէ ոչ մէկուն համար կարեւոր է:

Ստորեւ՝ վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

Table with 2 columns: Team names and match times.

Table with 2 columns: Team names and match times.


## ՖՈՐՄԱՆԱ 1

### ՍԱՆ ՄԱՐԻՆՈՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ ՎԱՂԸ



Ֆիզիքեյա (ճախին), որ իր բաժակը կը ստանայ Ռայքրոնընէն

Յորմիւլա 1ի 2003ի աշխարհի ֆուտբոլիստներու 4րդ



Իմոլայի վազընդից

կրան փրին տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, Սան Մարինոյի մէջ (Իմոլա):

Սկզբնաւորով, այս կրան փրին կը, որ Ֆեռարի իր նոր ինքնաշարժը գործածութեան պիտի դնէր, սակայն խումբին տնօրէնը՝ Ժան Թոտ ըսաւ, թէ նոր Ֆեռարիի երկու շաբաթով պիտի ուշանայ եւ յառաջիկայ Մայիս 4ին անիկա իր մասնակցութիւնը պիտի բերէ Սպանիոյ կրան փրին (Պարսելոնա):

Երէկ, Իմոլայի մէջ տեղի ունեցած յատուկ արարողութեան մը ընթացքին, ճորտընի իտալացի վարորդ Ճիանքարլո Ֆիզիքեյա Պրազիլի կրան փրին իր տիտղոսը ստացաւ Մաքլարընի Ֆինլանտացի վարորդ Բիմի Ռայքրոնէնէն:

Ֆիզիքեյա իր այդ տիտղոսը ստանալէն ետք յայտնենք, թէ ինչպէս շատ ուրախ կը զգայ այդ բաժակը ստանալուն համար:

Երէկուան առաջին փորձ - մրցումներուն ընթացքին Ֆեռարիի երկու վարորդները՝ գերմանացի Միքայէլ Ծոնմախըր եւ պրագիցի Ռուպէնս Պարթեյլլօ յաջողաբար գրաւեցին առաջին եւ 2րդ դիրքերը:

Նշենք, թէ վաղը՝ Կիրակի, ժամը 15:00ին (Պէյրուլի ժամով) տեղի ունենալիք կրան փրին պիտի ընդգրկէ 305,5 քմ. եւ անիկա պիտի ըլլայ 62 լէփ:

## Հ. Մ. Ը. Մ. ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱՃԻԴ

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. Պէյրուլի մասնաձեւի խմբապետական կազմի կազմակերպած «ՀԱՎԿՈՒՄԱՂ»-ը, որ տեղի պիտի ունենայ այսօր՝ Շաբաթ, 19 Ապրիլ 2003, կեսօրէ ետք ժամը 3:00ին

ՆՈՐ ՎԱՅՐ ԾՋՐՈՒՄ Ե՝  
Կամազայինի Նշան Փալանճեան ձեմարանի բալկին մէջ (Չորեք Էլ Պլաթ) փոխան Էշրեֆիի Տիրան Պապիկեան սրահին:

Հ. Մ. Ը. Մ. ՊԵՅՐՈՒԹԻ  
ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՅՐ

